

ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՑ

Ձորստարուց ի վեր գոյութիւն ունեցող (1879-ից) «Փարիզի շէնայկազեան ուսումնասիրաց ընկերութիւնը» 1883-ին իսկապէս ոչ թէ օրհասականին էր հասել արդէն, ինչպէս որ անցեալ անգամ ակնարկեցի *), այլ, աւելի ճիշտն ասած՝ շատ հիւանդ վիճակի մէջ էր:

Մայրաքաղաքիս համալսարանի իրաւաբանական բաժնի ուսանող պ. Հրանտ Ասատուր պատուական երիտասարդն էր, որ այն ժամանակ վարում էր ատենադպրի թէ փոխ-ատենապետի պաշտօնը այս ընկերութեան: Սորա նպատակն էր «Հայաստանցի աղքատ հայ պատանեկաց Եւրոպայի մէջ գործնական գիտութիւններ աւանդել տալ» (յօդ. 1, ընկ. կանոն.) որ ի հարկէ համակրելի նպատակ էր: Ես ևս անգամ պրուելով՝ սկսեցի այցելել Rue Claude Bernard փողոցի թիւ 15 տունը, ուր գտնոււմ էր յիշեալ հաստատութեան «կենդրոնատեղին» իւր գրադարանով:

Այս գրադարանի ոչ բազմաթիւ այլ և այլ հատորների մէջ տակաւին երևում էին Եօթը տարի առաջ (1876-ին) Փարիզի նախկին մի քանի ուսանողներիս նուիրած գրքերը, որ տեղոյս հայ ուսանողական հիմնուելի ընկերութեան գրադարանի խմորումն պիտի առաջ բերէին, որպէս և մասամբ բերել էին էլ: Բայց երևում էր որ «ուսումնասիրաց» անդամների գործունէութիւնը իրանց ընկերութեան նկատմամբ այլ ևս այն տաք եռանդը չունէր, որպիսին ցոյց էին տուել չորս տարի առաջ, երբ նոր էր կազմուել համաշխարհային մայրաքաղաքիս այս առաջին հայկական ընկերութիւնը «նախաձեռնութեամբ և ջանիւր դօքտօր Սիմէօն Ռափայելեանի»:

*) «Լուսնայ» № 1, 1905

1883 թ. յունուար ամսին այս ընկերութեան նորընտիր տնօրէն ժողովը թէև հանգամանօրէն կազմուած մի «համառօտ տեղեկագիր» *) հրատարակեց ի լուր հայ հասարակութեան ընդհանրապէս՝ ստորագրուած իւր եօթն անդամներէ ձեռքով և ներշնչուած մի լաւ ապագայի յուսով, սակայն նոյն 1883 թ. մայիս ամսին ընկերութեան, օրինակ, գրադարան-ընթերցարանը այնպիսի մի անկարգ վիճակի մէջ էր, մանաւանդ հայ պարբերական հրատարակութեանց ստացուած համարների վերաբերմամբ, որ ես անկարող եղայ չը յայտնել իմ դժգոհութիւնը պ. Հրանտ Ասատուրին մի մասնաւոր նամակով։—Ազնիւ բարեկամ, գրուած էի նրան, ընկերութեան գրադարանի նոյն շարունակ անկարգ ու անտէր վիճակը հատուց համբերութիւնս, մանաւանդ հայ լրագրների և մեր այլ պարբերական հրատարակութեանց պակասած թուերի նկատմամբ, որ կարգով նշանակեցի, բայց՝ ինչպէս տեսնում եմ, այնպէս նշանակուած էլ կը մնան։ Ոչ ոք՝ ով վերցրել է յիշեալ համարները՝ երևում է որ տակաւին չէ վերադարձրած» և այլն և այլն։

—Չը նայելով, որ մի ամիս առաջ՝ այն է նոյն 1883 ապրիլին «Հայկազեան» անդամների ընդհանուր ժողովի օրակարգի խնդիրների մէջ «ընկերութեան մատենադարանի յանձնաժողով» կազմուելու հարց ևս եղաւ, սակայն երևում էր, որ հայ մարդկանց սովորական սառն անտարբերութիւնը դէպի ազգային հասարակական մի գործ, որ անմիջապէս շահաբեր չէ մասնակցողի, երկար չէ սպասել տալիս և իւր կործանիչ գլուխը բարձրացնելով՝ շուտով մօտեցնում է նոյն այդ գործի լքման ու լուծման ցաւալի ժամը...

Այսպէս խօսելով՝ ես ոչ երբէք միտք ունէի և կամ ունիմ որ և է մեղադրանք բարձելու յիշեալ ընկերութեան այս կամ այն անդամի վրայ միայն, այլ իմ դժգոհութիւնը, որ կարծեմ մեր իսկական առաջադիմութեան նախանձախնդիր ամեն մի հայի անկեղծ դժգոհութիւն պիտի լինի, վերաբերում է թ. նոյն ժամանակներում Փարիզի մէջ ապրող և թէ այնուհետև և հետզհետէ այստեղ եկող «Հայկազեան ընկերութեան» բոլոր անդամներին, որպէս և տեղոյս հայ գաղութին առհասարակ։ Երևակայեցէ՛ք՝ եթէ իւրաքանչիւրը սրանցից կամ գոնէ սոցա «ուսումնասէր» մասը հէնց սկզբից շարունակ շարաթը մէկ անգամ մի փոքրիկ ժամ միայն նուիրէր իւր «բազմազբաղ» ժամանակից ընկերութեան գործը սիրով առաջ տանելուն, այսօր՝

*) «Արձագանք» 1883, № 3

քանանահինգ տարուց յետոյ, զի գիտէ թէ որպիսի լայն ծաւալ ունեցող և ինչ ազգագուտ գործունէութեան մի արարելոց դարձած պիտի լինէր մայրաքաղաքիս այս առաջին հայ ընկերութիւնը: Բայց ինչ եմ ասում,—ոչ թէ այսպիսի ամեն բանով ազատ ու քաղաքակիրթ առաջնակարգ մի երկրում, այլ և երանելի ու երազելի աշխարհի մէջ էլ որ լինենք մենք՝ հայերս մեր պատմական բնաւորութիւն դարձած տնաքանդ անմիաբանութիւնը դարձեալ չի հեռանալ մեզանից: Այո, այդ շատ հին բան է, կսսէք դուք: Վերջ հին դարուց յիշատակ է՝ կաւեւացնեմ ես, այո, յիշատակ, որ դժբախտաբար ասես աւանդ է մեզ տուած մեր հին նախորդներից պահելու, պահպանելու և ամեն ժամանակի ոգու համեմատ զարգացնելու քայքայիչ «մայր չափաց» այս յատկութիւնը, ըստ անմահ Եղիշէի:

Սակայն չեմ կարող մոռանալ պ. Հրանտ Ասատուր լրջմիտ դաղափարներով տոգորուած երիտասարդ իրաւարան ուսանողին, որի գովելի եւանդը Փարիզի «մեր ուսումնասիրաց ընկերութիւնը» առաջ տանելու նկատմամբ միշտ վառ էի տեսնում: Անշուշտ այս համակրելի երիտասարդը, որ Կ. Պօլսի հայ հասարակութեան ընտիր ու գործունեայ անդամ լինելու յոյսեր էր տալիս, իւր անհրաժեշտ ուսման թանգագին ժամերից շատ ժամանակ չէր կարող զոհել իհարկէ ընկերութեան գործերին: Բայց ես կարծում եմ, որ եթէ ընկերութեան ամեն մի անդամ սորա աշխատածի չափ ճգնէր «ուսումնասիրաց» գործի համար՝ այսօր անգթաբար թաղուած չէր լինի «Հայաստանցի աղքատ հայ պատանեկաց Եւրոպայի մէջ գործնական գիտութիւններ» ձեռք բերելու նպատակը: Ասածս ապացուցանելու համար թող տուէք առաջ բերեմ այստեղ պ. Հրանտի նամակը, որ գրում էր ինձ այստեղից Թիֆլիս 1883 ի հոկտեմբեր ամսին, երբ արդէն իմ ծննդավայրս էի վերադարձած: Ահա թէ ինչ էր ասում նա:

«...Յուսամ հասար ողջ առողջ հայրենիքդ և ողջունեցիր հայրենի տունդ, ուր պիտի շարունակես վայելել, մայրական խնամոտ թեոց ներքև, ընտանեկան կեանք: Կը նախանձիմ գործիդ և սրտիս խորէն երանի կը կարդամ քեզ, զի երկու տարուան պանդխտութիւնն հայրենատենչ ախտով վարակած է զիս և զի՛ Փարիզի ազատ կենցաղն մոռնել տուած չէ ինձ բնաւ ընտանեկան կենաց քաղցրութիւնքն:

«Վերջին քննութիւնն յաջողութեամբ անցուցի... Այս օրերս Փարիզի հայ ուսանողը բարեբախտօրէն կը շատնան և մեր ընկերութիւնն կը հարստանայ նոր անդամներով: Երեկ գիշեր՝

ընկերութիւնն ունեցաւ փառաւոր նիստ մը և յոյս տուաւ ինձ թէ նոր եռանդն, որով տողորուած են աստ հայ ուսանողք ապագային համար երաշխաւորութիւն մ'ըլլալէ զատ, վառ պիտի մնայ և համերաշխ միութիւնն պիտի գորացնէ Փարիզի հայ գաղթականութիւնն. արդարեւ լուրջ ընկերներ պաշտօններ ըստանձնեցին և կը խոստանան դործել: Պ. Պ. Քալանթարեան, Շահնազարեանց և Նահապետեան ընտրուեցան անդամներ մատենադարանի վարչութեան և պիտի աշխատին զարգացնել զայն. մողթէ յաջողութիւն:

Գիտես որ խոստացած ես ինձ համոզել կոյս Թայիրեանցն որ ետ առնու իւր հրաժարական *), այսօր կը յղեմ քեզ ներփակեալ նամակ մը ուղղեալ առ հայրենասէր կոյսն. կցէ անոր քու պերճախօսութիւնդ ալ և ջանա՛ որ մեր յետին նեցուկն եղող այդ ազնիւ կիներն չը բէ ընկերութիւնն... Հաճէ յղել ինձ կոյս Թայիրեանցի և պ. Նփ. Մատուրեանցի հասցէներն. նաև, եթէ կարելի է, խնդրէ կոյս Թայիրեանցէ իւր կենդանագիրն որպէս զի կախեմք զայն մեր մատենադարանին մէջ: Այս ամենը կը խնդրեմ քեզմէ իբրեւ վաղեմի ընկերէ մը. Հոս եղած ատենդ ինձ համար ցոյց տուած համակրանքդ և առ հասարակ հայրենասիրական զգացումներդ կապահովին զիս թէ չը պիտի մերժես ըստ կարի աշխատել մեր ընկերութեան վարկն վերաշինելու համար ի Թիֆլիս... և այլն»:

Չը «մերժեցի» անշուշտ «ըստ կարի աշխատել», բայց իմ նուաստ բանաւոր աշխատանքով միայն ի՞նչ կարող էի անել «ընկերութեան վարկն վերաշինելու համար ի Թիֆլիս», երբ հասարակական բոլոր գործօն բանալիներէց միմիայն մի թոյլ գրիչ ունէի ձեռքիս:

Ինչ և է, հայկազեան ուսումնասիրաց չարաբախտ ընկերութիւնը այնուհետև վայնաչարի շարունակել է դարձեալ իւր այլ ևս ոչ-նախանձելի գոյութիւնը, մինչև որ հասել է վերջապէս կատարեալ լուծման: Այստեղ ինձ պատմում են այժմ թէ ընկերութիւնը վերջերը այն աստիճան անտէր ու «մոռնաւրէկ» գրութեան մէջ էր գտնուել, որ իւր բնակարանի վարձը ժամանակին չը յանձնուելով տանտիրոջ՝ մատենադարանի գրքերը գրաւ էին բռնել. գրքեր, որոնցից շատ հատորներ՝ ինձ պատմողի ասելով, «կուլտուրական» ևս եղել էին ընկերութեան պոռոտախօս ու «ժիր» ոմանց անդամների կողմից:

*) Մեր սերելի քոյր Հռիփսիմէն հայկազեան ուսումնասիրաց ընկերութեան ներկայացուցիչ էր այն ժամանակ Թիֆլիսում:

Ներկայումս, ինչպէս պսացին ինձ, այս լուծեալ ընկերութեան թէ գոյքը և թէ դրամագլուխը (մօտաւորապէս 25—30 հազար ֆրանկ) Փարիզաբնակ մի քանի հայ պարոնների ձեռքին են, որոնք այս դէպքում կարծես ընթարթաթաքոյցներէ են նմանուելու Սրանք են—Զորահեան, Փէհլիվանեան, Յովակիմեան, Էջնայեան, Իսկենդար և Սըվաճեան:

Յուսանք և անհամբեր սպասենք, որ այս հայ պարոնները բարեհաճին մանրամասը հաշիւ ու համար տալ ընդհանուր հայ հասարակութեան՝ հանգամանօրէն պատմելով թէ ինչպէս և ինչո՞ւ համար այժմ իրանց ձեռքն են Փարիզի հայկազեան ուսումնասիրաց լուծեալ ընկերութեան գոյքն ու դրամագլուխը: Այս հասարակական սեպհականութիւնը նուիրողների իրաւացի կարծիքով «որոշ նպատակի» համար արած իրանց նուէրները ինչո՞ւ արդեօք անգործադիր, հետևաբար և մեռեալ վիճակի մէջ պիտի լինին այստեղ, ուր մարդկային ընկերական կեանքը իւր բոլոր կենսառիթ երևոյթներով եռում և ջեռում է ուժգնապէս: Այս է ահա խնդիրը...

Առ այժմ այսչափ: *)

Ն. ՅԱՐՈՅ

1904 զեկտեմբեր

*) պ. Յարոյի մի քանի նամակները Փարիզից մենք ստացել ենք անցեալ դեկտ. և յունուար ամիսներին, բայց մնացել են անտիպ՝ «Լումայի» հրատ. ուշ սկսելու պատճառով. ԽՄԲ.